ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ»

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ելնելով առկա մարտահրավերներից և արդեն իսկ արձանագրված ձեռքբերումներից՝ «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Ծրագիր), որպես վերջնական նպատակ, սահմանվել է ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն կտա ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, և կհանրահռչակվի կրթությունը որպես հանրային բարիք՝ ապահովելով կրթության բոլոր շահակիցների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը, ձևավորելով ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը և մասնակցային ժողովրդավարության վրա հենվող հանրային համերաշխությունը:

Ծրագրի վերջնական նպատակի իրականացման համար մինչև 2030 թվականը սահմանված ռազմավարական ուղղությունները երեքն են՝ համընդհանուր ներառական սովորողակենտրոն և մասնակցային կրթական միջավայրի ստեղծում, կրթության արդյունավետության բարձրացում, կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում ու արտահանում: Ծրագրի 2024 թվականի սույն հաշվետվությունը ներկայացված է նշված երեք ռազմավարական ուղղությունների շրջանակում իրականացված միջոցառումների տրամաբանությամբ՝ դրանք խմբավորելով ըստ ոլորտային նպատակների: Մինչև 2030 թվականն ակնկալվող վերջնարդյունքների առաջընթացն ըստ առանձին ցուցանիշների ներկայացված է սույն հաշվետվությանը կից Հավելվածում:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Նախադպրոցական կրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում ու հզորացում

- *Նախադպրոցական հաստատությունների աշխատակազմի պարբերական վերապատրաստումների կազմակերպում՝ մեդիա գործիքների ու SS կիրառմամբ, այդ թվում՝ ծնողավարման դասընթացների, մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների կիրառման ուղղությամբ*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2023 թվականի մայիսի 31-ի N790-Ա/2 հրամանով փոփոխություն էր կատարվել նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների վերապատրաստման չափորոշչում և օրինակելի ծրագրում՝ ներառելով մեդիա գործիքների ու SS կիրառմամբ, այդ թվում՝ ծնողավարման դասընթացների, մանկավարժության և կառավարման նորարարական մոտեցումների կիրառման ուղղությամբ թեմաներ: Նախադպրոցական ոլորտի մանկավարժական աշխատողների վերապատրաստումներում ընդհանուր առմամբ ընդգրկվել են շուրջ 4040 մասնագետներ, որոնցից շուրջ 1500-ը՝ 2024 թվականին: Վերապատրաստված մանկավարժների կողմից

իրականացվում են ծնողավարման դասընթացներ ու խորհրդատվություններ: Վերապատրաստում անցած նախադպրոցական կրթության անձնակազմի մասնաբաժինը կազմել է շուրջ 60%:

- *Նախադպրոցական հաստատությունների ղեկավարման իրավունքի նպատակով հավաստագրման մեխանիզմի գործարկում*

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի նպատակով հավաստագրման մեխանիզմը գործարկված է, գործընթացը կրում է շարունակական բնույթ:

2023 թվականի հունիսի 14-ին ընդունված «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» N ՀՕ-217-Ն օրենքում ամրագրված է, որ անորոշ ժամկետով կնքված պայմանագրերով աշխատող նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենները հետագա պաշտոնավարման համար մինչև 2024 թվականի հունիսի 1-ը պետք է ապահովեն նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ունենալու պահանջը, որի նպատակով էլ պարբերաբար անցկացվել են հավաստագրման քննություններ: 2024թ. տարեվերջի դրությամբ հավաստագիր ունեցող տնօրենների մասնաբաժինը կազմել է շուրջ 80%:

- *Նախադպրոցական հաստատություններում մասնագիտական կադրերի առկայության ապահովում՝ տրանսպորտային ծախսերի փոխհատուցման միջոցով*

Շրջանառվել է «Համայնքային նախադպրոցական հաստատությունների մանկավարժական աշխատողներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգի» նախագիծը, որը կհաստատվի 2025 թվականի 1-ին կիսամյակում:

- *Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի մարտի 2-ի N16-Ն հրամանով հաստատված՝ «Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման և տարակարգ ստացած մանկավարժական աշխատողներին պետական բյուջեի միջոցների հաշվին հավելավճար տրամադրելու կարգի» համաձայն, առաջին աստիճանի տարակարգ է շնորհվել 26 մանկավարժական աշխատողի, երկրորդ աստիճանի տարակարգ՝ 1 աշխատողի: Տարակարգի շնորհիվ աշխատակիցները ստանում են 30-50% հավելավճար՝ պետական բյուջեի միջոցներից:

- *Նախադպրոցական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շարունակական վերանայում՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները*

ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N744-Ն որոշմամբ հաստատվել է «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը»: Վերջինիս ներդրման նպատակով, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի նոյեմբերի 16-ի հրամաններով հաստատվել են նախադպրոցական կրթական համալիր ծրագրեր՝ տարիքային բոլոր

խմբերի համար: Ծրագրերը փորձարկվել են 2022-2023 ուսումնական տարում, այնուհետև դրանք լրամշակվել ու հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 19-ի հրամաններով: Ծրագրերի աստիճանական ներդրումը հանրապետության համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում շարունակվում է, տարեվերջի դրությամբ ընդգրկելով 542 հաստատություն:

Ստեղծվել է մենթոր մանկապարտեզների ցանց, որը աշխատանքներ է իրականացրել շուրջ 2500 մանկավարժական աշխատողների հետ՝ չափորոշչի ներդրմանն ուղղված վերապատրաստումների և շարունակական մեթոդական աջակցության ձևաչափերով:

Նպատակ 2. Նախադպրոցական կրթության կառավարման և ֆինանսավորման ծախսարդյունավետության ապահովում՝ այդ թվում մասնավոր ոլորտի ծառայությունների զարգացման միջոցով

- *Պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԶԱՊԿՈՒ) երեխաների համար պայմանների ապահովման ֆինանսավորում*

ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N1169-Ն որոշմամբ հաստատված՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին կարգի» համաձայն, պետական բյուջեի միջոցների հաշվին կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հաստատության մեկ սանի հաշվարկով ֆինանսավորումը իրականացվում է 2022 թվականի սեպտեմբերի 1-ից:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումը նախադպրոցական կրթության ոլորտում մեկնարկել է 2022 թվականին՝ 3 մարզերում, իսկ 2023 թվականից այն ներդրվել է հանրապետության ողջ տարածքում: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումն իրականացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում: Համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացի շրջանակներում՝ անվճար նախադպրոցական կրթություն է ստացել 1233 կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխա:

- *Պետական բյուջեից համայնքային մանկապարտեզներում սոցիալապես անապահով ընտանիքների, ինչպես նաև շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաների կրթության ֆինանսավորում*

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 19-ի N1808-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացում են կատարվել ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի՝ «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման կարգը, այդթվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին» N1169-Ն որոշման մեջ: Նշված փոփոխության համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ից պետական բյուջեի միջոցների

հաշվին անվճար նախադպրոցական կրթություն են ստանում նաև զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի երեխաները, ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաները: 2024 թվականին նախադպրոցական հաստատություններում ուսուցման մեջ ընդգրկված զինծառայողի ծնողի (ծնողների) երեխաների թիվը կազմել է 7724:

Գործող կարգի համաձայն, ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ճանաչված, անապահովության սահմանային միավորից՝ 28-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքների երեխաները պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար նախադպրոցական կրթություն կստանան 2026 թվականի սեպտեմբերի մեկից:

- *Նախադպրոցական ծառայությունների լիցենզավորման թափանցիկ և պարզ համակարգի ներդրում*

ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N1480-Ն որոշմամբ սահմանվել են նախադպրոցական ծառայություններ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորման պահանջները: ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2022 թվականի դեկտեմբերի 9-ի N81-Ն և 2023 թվականի հոկտեմբերի 31-ի N138-Ն հրամաններով սահմանվել են նախադպրոցական այլընտրանքային (բացառությամբ փորձարարական) և նախադպրոցական ծառայությունների ծրագրերի բովանդակությանը ներկայացվող պահանջները: Ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 9-ի N1944-Ն որոշմամբ հստակեցվել են նախադպրոցական տարիքային խմբերով գործունեության թույլտվություն տալու, ըստ տարիքային խմբերի համակազմի սահմանային տեղերի թիվը փոփոխելու պահանջները:

Գործող ընթացակարգերի համաձայն, շարունակվել է նախադպրոցական ծառայություններ մատուցող կազմակերպությունների լիցենզավորումը, որի շրջանակում լիցենզավորվել է 155 կազմակերպություն (գործող կազմակերպությունների շուրջ 58%-ը), որոնցից 87-ը՝ 2024թ, ինչը նախադպրոցական կրթության որակի վերահսկողության երաշխիք է: Լիցենզավորված մասնավոր նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախում են շուրջ 8200 երեխաներ:

- *Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգի գործարկում*

Նախադպրոցական կթության կառավարման տեղեկատվական ամբողջական համակարգը գործարկված է 2023-2024 ուսումնական տարվանից, տվյալները պարբերաբար հավաքագրվում և վերլուծվում են համակարգի բոլոր հաստատությունների համար:

Նպատակ 3. 0-5 տարեկան երեխաների բոլոր խմբերի համար նախադպրոցական ծառայությունների ծածկույթի ամբողջական ապահովում գյուղական և քաղաքային համայնքներում

- *Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների քարտեզագրում, ըստ քարտեզագրման արդյունքների հիմնանորոգում և վերակառուցում՝ ստեղծելով տարբեր կրթական կարիքներ ունեցող երեխաների պահանջներին համապատասխանող և անվտանգ միջավայր*

2024 թվականի դեկտեմբերի դրությամբ հիմնանորոգված և վերանորոգված/ վերակառուցված նախադպրոցական հաստատությունների թիվը հասցված է՝ 195-ի (119 մանկապարտեզ, 76 նախակրթարան): Շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են 136-ում, նախապատրաստական աշխատանքներ են իրականացվում 64-ում: Նախադպրոցական հաստատություններից (որտեղ արդեն աշխատանքներն ավարտվել են) 125-ը գտնվում են գյուղական, 70-ը՝ քաղաքային բնակավայրերում:

- *Նախադպրոցական ծառայություններ չունեցող համայնքներում, ներառյալ ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության վայրերում, նախադպրոցական հաստատությունների, այդ թվում՝ այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների ներդրում*

Շարունակվել են աշխատանքները նախադպրոցական ծառայություններ չունեցող բնակավայրերի քարտեզագրման ուղղությամբ: Նախադպրոցական ծառայություններ չունեցող բնակավայրերի թիվը, որտեղ նախատեսված չեն կրթահամալիրների կամ մանկապարտեզների կառուցում, հասցված է 162-ի, որոնցում նախատեսվում է նախադպրոցական ծառայության հասանելիության ապահովում տարբեր սկզբունքների կիրառմամբ: Նոր ներդրված այլընտրանքային ծառայությունների թիվը ներկայումս 23 է:

Նախադպրոցական ծառայություններ կգործեն նաև Կառավարության որոշմամբ հաստատված և արդեն շինարարությունը մեկնարկած բոլոր 73 կրթահամալիրներում, որոնք ընդրգկված են 500 մանկապարտեզ ծրագրում: Բոլոր նորակառույց և վերանորոգված մանկապարտեզները հագեցվում են ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր գույքով:

- *Նախադպրոցական հաստատություններում աղետների դիմակայունության և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու պայմանների ապահովում և կարողությունների զարգացում*

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Երևան քաղաքում և հանրապետության 10 մարզերում գործող նախադպրոցական հաստատությունների մասնաբաժինը, որտեղ մշակված և հաստատված են աղետների ռիսկերի կառավարման պլանները, կազմում է շուրջ 70%:

- *Նախադպրոցական հաստատություններում զարգացնող միջավայրի ապահովում՝ ուսումնական գույքի, դիդակտիկ նյութերի, զարգացնող խաղերի շարունակական արդիականացման միջոցով*

Բոլոր նորակառույց և վերանորոգված մանկապարտեզները հագեցվում են ժամանակակից պահանջներին համապատասխանող նոր գույքով:

Մշակվել է 0-2 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության փորձնական ծրագիր, որը 2025 թվականին կներդրվի 10 համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատություններում՝ Երևան, Գյումրի, Վանաձոր և Հրազդան քաղաքներում: Լրաշմակվել են այս տարիքային խմբի համար անհրաժեշտ գույքի ցանկը, սննդային նորմատիվները, ինչպես նաև նախադպրոցական մանկավարժներին ներկայացվող պահանջները, որոնք վերապատրաստումների միջոցով կփոխանցվեն մանկավարժներին:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Հանրակրթության ոլորտում բովանդակության, մասնագիտական կարողությունների և որակի շարունակական զարգացում և հզորացում, ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացում

- *Հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության և կառուցվածքի շարունակաբար վերանայում՝ ուղղորդելով դեպի ուսումնառության վերջնարդյունքները, ուսուցչի և դպրոցի ինքնավարության և մասնակցայնության մեծացումը և ստեղծարարության խթանումը*

Հանրակրթության նոր չափորոշիչը ներդրվել է ևս չորս դասարանում՝ գործելով 12 դասարաններից 7-ում:

2024 թվականի մայիսին հաստատվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ 1-ին, 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարանների առարկայական ծրագրերը:

ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման N 2 հավելվածում՝ «Հայոց պատմություն» բառերը փոխարինվել են «Հայաստանի պատմություն» բառերով: Փոփոխությամբ պայմանավորված, շրջանառվել է նոր՝ «Հայաստանի պատմություն» առարկայական ծրագիրն ու չափորոշիչը:

3-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ դասարաններում նոր չափորոշչի ներդրման նպատակով, վերապատրաստվել են բոլոր դպրոցների տնօրենները և տնօրենների տեղակալներն ու ուսուցիչները:

- *Հանրակրթական դասագրքերի վերահրատարակում՝ վերանայված առարկայական չափորոշիչներին, ծրագրերին և սահմանված ստանդարտներին համապատասխան*

Հանրակրթության պետական չափորոշչի ներդրման ժամանակացույցի համաձայն՝ յուրաքանչյուր տարի ապահովվել են տվյալ տարում ՀՊՉ-ի ներդրվող դասարաններում դասագրքերի ստեղծման և տպագրության աշխատանքները, մասնավորապես՝

2023 թվականին՝ 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններ,

2024 թվականին՝ 3-րդ, 6-րդ, 8-րդ,10-րդ դասարաններ,

2025 թվականի համար հայտարարված է՝ 1-ին, 4-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ դասարանների դասագրքերի մրցույթ: Ներկայացված դասագրքերը փորձաքննման փուլում են:

Ընդհանուր առմամբ, 2024 թվականին նոր չափորոշչին համահունչ ստեղծվել են՝ 53 անուն, և տպագրվել են՝ 93 հեղինակի/հեղինակային խմբի դասագրքեր: Մրցակցային ընթացակարգերի արդյունքում մեկ դասագրքի արժեքը միջինում նվազել է 23-26%-ով:

- *Ուսուցիչների մասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունների ընդլայնում՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական չափանիշների հետ*

ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N596-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջների համաձայն՝ կամավոր ատեստավորման արդյունքում 70-79, 80-89, 90-100% արդյունք ցուցաբերած ուսուցիչները համարվում են ատեստավորված, հավելավճարը հատկացվում է համապատասխան %-ի չափով, փոխվում է նաև դրույքաչափը՝ սահմանվելով 200.000 դրամ՝ մեկ դրույք զբաղվածության համար, որի նկատմամբ կիրառվում է համապատասխան չափով հավելավճարը: Կամավոր ատեստավորման գործընթացում ուսուցիչների համար բարելավող նորմեր նախատեսող կարգավորումների շրջանակներում 60-69% արդյունք ցուցաբերած ուսուցիչները ունեն դրույքաչափի փոփոխություն՝ առանց հավելավճարի հատկացման: 2024 թվականին կամավոր ատեստավորման արդյունքում հանրակրթական դպրոցի հավելավճար ստացող ուսուցիչների մասնաբաժինը հասցվել է 20%-ի: 2024 թվականին ատեստավորմանը մասնակցել է 5012 անձ, որոնցից 3841-ը գրանցել են դրական արդյունքներ և ունեն դրույքաչափի բարձրացում, իսկ 2764 ուսուցիչ ստացել է նաև 30-50% հավելավճարի հնարավորություն: Վերջին 4 տարիների ընթացքում անցկացված կամավոր ատեստավորման արդյունքում արդեն 6321 ուսուցիչ կամ ուսուցիչների շուրջ 20%-ն ունի բարձրացված դրույքաչափով աշխատավարձ:

Տարակարգի և կամավոր ատեստավորման համակարգերի միաժամանակյա կիրառությունը հնարավորություն է տալիս ուսուցիչներին 300.000-ից մինչև 600.000 դրամ վարձատրություն ստանալ, մասնավորապես, ներկայումս 300.000 – 400.000 դրամ աշխատավարձ ստանում է 1667 ուսուցիչ, 400.000 դրամ և ավելի աշխատավարձ է ստանում 563 ուսուցիչ (շուրջ 2,5 անգամ ավելի է նախորդ տարվա ցուցանիշից):

Փոփոխվել է ուսուցիչների հերթական ատեստավորման մեխանիզմը, որին ընդառաջ գնահատվել են ատեստավորման ենթակա 5339 ուսուցիչների մասնագիտական զարգացման կարիքները՝ դրանց համապատասխան վերապատրաստումները մեկնարկելու համար:

Շարունակվել է տարակարգի շնորհման ծրագիրը, որի շրջանակում 285 ուսուցիչ ստացել է տարակարգ (նախորդ տարվա ցուցանիշը աճել է 2,8 անգամ)՝ արդյունքում ունենալով 10-50% հավելավճար, նրանցից 59 ուսուցիչ արժանացել է 4-րդ աստիճանի տարակարգի և ստանում է 50% հավելավճար: Ներկայում տարակարգի հավելավճար ստանում է ընդհանուր թվով՝ 1228 ուսուցիչ:

- *Հանրակրթական ուսումնական հաստատությունների աշխատակազմի պարբերական վերապատրաստումների իրականացում, այդ թվում՝ մանկավարժության և*

կառավարման նորարարական մոտեցումների, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ

ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի հերթական ատեստավորման կարգը հաստատելու և տարածքային հանձնաժողովների ստեղծման և գործունեության կարգը սահմանելու մասին» N167-Ն որոշման համաձայն, իրականացվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման գործընթացը: Սահմանված կարգի համաձայն՝ յուրաքանչյուր տարի ուսուցիչը, ըստ իր մոտ բացահայտված մասնագիտական զարգացման կարիքի, մասնակցում է վերապատրաստումների: Վերապատրաստումների արդյունքում անհրաժեշտ չափով կրեդիտներ հավաքելուց հետո ուսուցիչն ատեստավորվում է:

Ուսուցիչների հերթական վերապատրաստման և ատեստավորման գործընթացը 2024 թվականին իրականացվել է ուսուցչի մասնագիտական կարիքի գնահատման արդյունքների հիման վրա: 2024 թվականին աատեստավորման ենթակա բոլոր ուսուցիչները՝ ում 5 տարին լրացել է, ով ունի 1-5 տարվա աշխատանքային փորձ և առարկայական գիտելիքների կարիք, նրանց մասնագիտական զարգացման կարիքները գնահատվել են և վերապատրատումները մեկնարկել են: Գնահատվել են ատեստավորման ենթակա 5339 ուսուցչի մասնագիտական զարգացման կարիք՝ համապատասխան վերապատրաստումները մեկնարկելու համար, որոնցից 3 տարվա շրջափուլով վերապատրաստման ենթակա է 4649 ուսուցիչ, 5 տարվա շրջափուլով՝ 690 ուսուցիչ: Եվս 607 ուսուցչի մոտ գնահատվել է առարկայական գիտելիքի իմացության կարիք, որոնք վերապատրաստվել և մասնակցել են կամավոր ատեստավորմանը:

Կարիքի վրա հիմնված մասնագիտական զարգացման ծրագրին համապատասխան վերապատրաստված ուսուցիչների համամասնությունը 2024 թվականին հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների թվի նկատմամբ 100% է, իսկ ուսուցիչների ընդհանուր թվի նկատմամբ՝ շուրջ 20%:

- *Գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցների և ԲՏՃՄ առարկաների ուսուցիչների հավելյալ խրախուսման մեխանիզմների ներդրում*

Գյուղական մինչև 100 սովորող ունեցող դպրոցների և ԲՏՃՄ առարկաների դասավանդող ուսուցիչների պահանջարկի լրացման արդյունավետ գործիքակազմը ներդրված է: Խրախուսման մեխանիզմի ներդրումը մեծացրել է հանրակրթական ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ առարկաների դասավանդման գրավչությունը և կրճատել գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցներում ուսուցիչների պակասը: 2024 թվականին աշխատանքի ընդունված նոր ուսուցիչների թիվը շուրջ 3300 է, և կազմում է ուսուցիչների ընդհանուր թվաքանակի շուրջ 11%-ը: 2024 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ԲՏՃՄ առարկաների գծով լրավճար է ստացել շուրջ 8200 ուսուցիչ, իսկ գյուղական մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցներում լրավճար է ստացել շուրջ 3183 ուսուցիչ:

Վերոնշյալ երկու ծրագրերի նպատակն է՝ խրախուսել ուսուցիչների մուտքը հատկապես գյուղական բնակավայրերի փոքր համակազմ ունեցող ուսումնական հաստատություններ՝

համալրելով թափուր հաստիքները և բարձրացնելով աշխատանքի գրավչությունը դպրոցում՝ ապահովելով սովորողների կրթության իրավունքը:

- *Մանկավարժի որակավորման ճկուն մեխանիզմների մշակում և ներդրում, այդ թվում՝ երկակի որակավորմամբ մանկավարժների պատրաստում*

2024 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N ՀՕ-387-Ն օրենքով ամրագրվել են գործընթացը կարգավորող լիազորող նորմեր, մասնավորապես Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև՝

1) տվյալ առարկայի մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող և տվյալ մասնագիտական կրթական ծրագրով կամ առանձին մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող առնվազն 30 կրեդիտ հավաքած անձը,

2) բնագիտություն, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ, ճարտարագիտություն, մաթեմատիկա (ԲՏՃՄ) առարկաների մասնագիտական ոլորտում բարձրագույն կրթություն ունեցող անձը աշխատանքի ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, մանկավարժահոգեբանական ու ուսումնամեթոդական հմտություններ ապահովող մոդուլներով իրականացվող դասընթացի միջոցով առնվազն 30 կրեդիտ հավաքելու պայմանով»:

Պահանջվող 30 կրեդիտ շնորհող դասընթացը կարող է կազմակերպել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կազմակերպությունը կամ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի երաշխավորած կրթական ծրագրով (մոդուլով):

Ինչպես նաև ներդրվել ու իրականացվել է երկակի որակավորում շնորհող /բակալավրի աստիճանում/՝ Մաթեմատիկա-ֆիզիկա, Մաթեմատիկա-ինֆորմատիկա, Կենսաբանություն-քիմիա, Աշխարհագրություն-բնագիտություն, Անգլերեն-գերմաներեն, Անգլերեն-ֆրանսերեն, Անգլերեն-ռուսերեն մասնագիտություններով ընդունելություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում և Վ.Բրյուսովի անվան համալսարաններում:

ՀՀ-ում 30 կրեդիտ ստացած և հանրակրթական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչների թիվը ներկայում 295 է:

- *Ուսուցիչների նպատակային ուսուցման, ինչպես նաև հեռավոր համայնքներ գործուղման ծրագրերի և ընթացակարգերի վերանայում*

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը լրացվել է նոր դրույթով, որի արդյունքում առնվազն մեկ անգամ հայտարարված մրցույթի արդյունքներով ուսուցչի թափուր տեղը նույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները բավարարող անձով չհամալրվելու դեպքում, ուսուցչի տվյալ թափուր տեղի համար հայտարարված հաջորդ մրցույթին կարող է դիմել նաև ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն

ուսումնական հաստատության առնվազն բակալավրի կրթական ծրագրով ուսումնառող ավարտական կուրսի ուսանողը՝ գյուղական բնակավայրի ուսումնական հաստատությունում աշխատելու նպատակով, որի համար աշխատանքային պայմանագրով նախատեսված ժամանակահատվածը կհաշվարկվի որպես աշխատանքային ստաժ:

ՀՀ մարզերում տեղակայված հաստատությունների այն ուսուցիչներին և դպրոցահասակ երեխաներին, որոնց փաստացի բնակության վայրը տարբեր է (դպրոցի հեռավորությունը իրենց բնակության վայրից ավելի է 5 կմ-ից), տրամադրվում է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N47-Ն հրամանի համաձայն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի N40-Ն հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից մարզերի պետական ուսումնական հաստատություններ համապատասխան մասնագետ գործուղելու կարգը», որն ուղղված է ՀՀ մարզերի դպրոցներում առկա մանկավարժների մեծաթիվ թափուր հաստիքները համալրմանը: Գործուղված մասնագետներին տրվում են լրացուցիչ հատկացումներ:

ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 12-ի «2023 թվականին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագիրը հաստատելու մասին» N1756-Լ որոշման շրջանակներում, 2023 թվականի հոկտեմբերի 16-ից գործարկվել է https://kadrer.emis.am/ հարթակը, որում առկա են ուսուցչի թափուր հաստիքները՝ ըստ ՀՀ մարզերի:

Մարզերի դպրոցների մանկավարժների թափուր հաստիքների համալրմանն է ուղղված նաև էլեկտրոնային դասավանդման հնարավորությունը: Էլեկտրոնային դասավանդում իրականացվում է ՀՀ 95 գյուղական դպրոցներում, մենթոր դպրոցների թիվը՝ 29 է:

Պետության համալիր քաղաքականության արդյունքում 2024-2025 ուսումնական տարում դպրոցներ են մուտք գործել 3300 նոր ուսուցիչներ, որոնց 16%-ը տղամարդ ուսուցիչներ են: Նոր ուսուցիչների 56.6%-ն աշխատանքի է անցել գյուղական դպրոցներում: Նոր ուսուցիչների 32%-ը մինչև 30 տարեկան է, 39%-ը՝ 31-40 տարեկան: Նոր ուսուցիչները հատկապես ակտիվորեն են ներգրավվել բնագիտական առարկաների և ֆիզկուլտուրայի ուղղությամբ:

Նպատակային ծրագրերի մշակում և իրականացում՝ Սփյուռքի ներուժը, ինչպես նաև մասնավոր ոլորտի որակյալ կադրերին, այդ թվում՝ ԲՏՃՄ ուղղությամբ, հանրակրթական հաստատություններում դասավանդման գործընթացում ընդգրկելու նպատակով

ԲՏՃՄ ուղղությամբ հանրակրթական հաստատություններում դասավանդման գործընթացը բարելավելուն ուղղված Ծրագրի միջոցառման հիմնական շահառուները՝ ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների /«Աշխարհագրություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Բնագիտություն», «Բնություն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա», «Ինֆորմատիկա», «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն»/ դասավանդող ուսուցիչներն են (բացառությամբ մաթեմատիկական առարկաների), իսկ փոխհատուցման շրջանակը՝ ՀՀ պետական բյուջե: Այս ծրագիրն առնչվում է հանրապետության բոլոր դպրոցների բնագիտական և տեղեկատվական

տեխնոլոգիաների ուղղության ուսուցիչներին, որոնց աշխատավարձը 2023 թվականի սեպտեմբերից 25 տոկոսով բարձրացել է:

ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական դպրոցների բոլոր ուսուցիչներին հավելավճար տրամադրելու արդյունքում կանխատեսվում է, որ կհամալրվեն հատկապես արհեստ, արվեստ բնագավառների և ԲՏՃՄ ոլորտի առարկաների ուսուցիչների թափուր տեղերը, ինչպես նաև բոլոր ուսուցիչների համար կապահովվի ֆինանսական որոշակի բարելավում, որովհետև այդ դպրոցներում ուսուցիչներ գրեթե 1 դրույք ծանրաբեռնվածություն չեն ունենում: Մասնավորապես, սահմանված ամսական լրավճարը տրվում է մինչև 100 սովորող ունեցող հաստատության մինչև 1,0 դրույք ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցիչներին առավելագույնը 0,5 դրույքի չափով՝ մինչև 1,0 դրույքի համար սահմանված դրույքաչափի լրանալը:

Ուսուցիչների մասնագիտական զարգացման և վարձատրության բարձրացման փոխկապակցված մեխանիզմների ներդրման արդյունքում բարձրացել է ուսուցչի աշխատանքի գրավչությունը, ինչի շնորհիվ 2024 թվականին շուրջ 3300 նոր ուսուցիչ է մուտք գործել համակարգ, որոնց թվում նաև մասնավոր ոլորտից և Սփյուռքից ներգրավված ուսուցիչներ են: Սփյուռքի ներկայացուցիչներ ընդգրկվել են նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ՝ «Դասավանդիր Հայաստան» կազմակերպության հետ իրականացվող ծրագրի շրջանակում, գյուղական դպրոցներում դասավանդելու նպատակով: Մասնավոր ոլորտից դասավանդողներ ներգրավվել են նաև Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Արհեստական բանականության սերունդ» ծրագրում, որի շրջանակում 15 ավագ դպրոցներում սովորողներն ուսումնասիրում են խորացված մաթեմատիկա և ծրագրավորման լեզուներ:

- *Մանկավարժների և վարչական աշխատողների պատրաստման մասնագիտական կրթական ծրագրերի ու որակավորումների համապատասխանեցում հանրակրթության բովանդակությանը, այդ թվում՝ վերաորակավորման ճկուն մեխանիզմների ներդրմամբ*

Տարբեր բաղադրիչների շրջանակում՝

իրականացվել է շուրջ 8550 մանկավարժական աշխատողների վերապատրաստում,

իրականացվել է շուրջ 450 վարչական աշխատողի/մենթոր դպրոցի տնօրեն, տեղակալ և այլ խմբերի/ վերապատրաստում,

իրականացվել է շուրջ 500 տնօրենի վերապատրաստում,

վերապատրաստվել է շուրջ 13.000 մանկավարժ և վարչական աշխատող, և հավելյալ «Թիչ» գործիքով՝ 3444 մանկավարժական աշխատող:

Նպատակ 2.Հանրակրթական ծրագրերի բազմազանության և հասանելիության ապահովում՝ ծառայությունների հասցեական տեղաբաշխման և տրամադրման միջոցով

- *Պարտադիր կրթության համակարգից (ՊՀԿ) դուրս մնացած երեխաների հաշվառման համակարգի արդյունավետ գործարկում*

Պարտադիր կրթության համակարգից (ՊՀԿ) դուրս մնացած երեխաների հաշվառման գործընթացն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի

փետրվարի 11-ի N154-Ն որոշմամբ հաստատված՝ «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգի»:

Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հաշվառման էլեկտրոնային համակարգի գործարկումը սկսվել է 2024 թվականի մայիսի 1-ից, և համակարգի գործարկումից մինչ օրս՝ պարտադիր կրթության համակարգ է վերադարձել 6441 երեխա (պարտադիր կրթությունից դուրս մնացած համարվող երեխաների շուրջ՝ 35 %-ը):

Միևնույն ժամանակ համեմատության համար նշենք, որ առաջին դասարան ընդունվողների 10%-ը, որն ամեն տարի դպրոց չէին դիմում և կրթությունից դուրս էին մնում, իրավական ակտում կատարված փոփոխությունների արդյունքում 2024 թվականին դիմել են դպրոց, ինչի արդյունքում շուրջ 3000-ով ավելի երեխա է ընդունվել դպրոց:

2023 թվականի վիճակագրության համաձայն, հիմնական դպրոցն ավարտող երեխաների ցուցանիշները, որոնց 62.6.%-ն ընդունվել է ավագ դպրոց, 20.9%-ն ընդունվել է ՄԿՈՒ հաստատություն, 16.5 %-ը չի ավարտել դպրոցը (չի շարունակել ուսումը), էականորեն բարելավվել են նախորդ տարիների ցուցանիշների համեմատ:

Միևնույն ժամանակ, ՀՀ բոլոր դպրոցները նոր ՀՊՉ-ի ներդրման շրջանակում իրականացնում են երկարօրյա ծառայություն:

Երկարօրյա ծառայություններից օգտվող սովորողների թիվը 8164 է:

- *Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներառականության ապահովում՝ ֆիզիկական և ուսումնական միջավայրերի հարմարեցման միջոցով*

Հանրակրթական ուսումնական հաստատությունների ներառականության ապահովման ցուցանիշը հաշվարկվում է 2 բաղադրիչով՝ ֆիզիկական և ուսումնական միջավայրերի հարմարեցման միջոցով:

Հանրապետության 1400 դպրոցներից 243-ում (որը կազմում է ընդհանուրի 17.4%-ը), ապահովված է ֆիզիկական միջավայրի մատչելիություն: Խելամիտ հարմարեցումների ապահովման նպատակով ՀՀ ուսումնական հաստատություններին տրամադրվել է նպատակային ֆինանսավորում՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» N79-Ն հրամանի: Հանրապետության դպրոցների շուրջ 90%-ում ապահովված է խելամիտ հարմարեցումների միջոցով ուսումնական միջավայրի հարմարեցում:

Ընդհանուր առմամբ՝ ֆիզիկական և ուսումնական միջավայրերի հարմարեցումներին վերաբերող ցուցանիշը կազմում է շուրջ 50%:

- *Հանրակրթական ուսումնական հաստատություններում մանկավարժա-հոգեբանական ծառայությունների հասանելիության ապահովում*

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրմամբ, հանրապետության բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա են մանկավարժահոգեբանական ծառայություններ, դպրոցներում ներդրված են ուսուցչի օգնականի և հոգեբանի հաստիքներ: Ուսուցչի օգնականների հաստիքները համալրված են համապատասխան մասնագետով: 855 հանրակրթական ուսումնական

հաստատություններ համալրված են հոգեբան մասնագետով (հաստատությունների շուրջ 60%-ը):

- *Ծնողների հետ համագործակցության գործիքակազմի մշակում և ներդրում*

«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի (ԿԶՆԱԿ) և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ) հետ համատեղ, մշակվել է «Ծնողավարություն» ձեռնարկը: Մինչ երաշխավորումը, ԿԶՆԱԿ-ի և ՀՄԿ-ի մասնագետները ձեռնարկի շուրջ ծնողների շրջանում քննարկումներ են իրականացրել, որի արդյունքում լրամշակված նախագիծը ներկայացվել է երաշխավորման՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով: Մշակված ձեռնարկն ու վերապատրաման մոդուլները փոխանցվել են բոլոր հանրակրթական դպրոցներին, որոնք դասղեկների միջոցով իրականացրել են ծնողավարման դասընթացներ:

- *Հանրակրթական ուսումնական հաստատություններին որակյալ խորհրդատվության և աջակցության տրամադրում ռեսուրս-կենտրոնների և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից*

ՀՀ մարզերում գործող տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները (ՏՄԱԿ) հանրակրթական դպրոցներին տրամադրում են անհրաժեշտ խորհրդատվություն և աջակցություն: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվում է ՏՄԱԿ-երի մասնագետների վերապատրաստումներ: Շարունակվում է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող՝ Երևանի լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրը հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնի վերակազմակեր պելու մոդելի պիլոտային փորձարկումը: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 12-ի N 2346-Ա/2 հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ հատուկ դպրոց-ռեսուրս կենտրոնների վերակազմակերպման գործողությունների պլանը և ժամանակացույցը»: Տարվա ընթացքում ՏՄԱԿ-ների կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ են մատուցվել հանրապետության 1400 հանրակրթական ուսումնական հաստատությունում:

- *Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների մասնագիտական առաջխաղացման, ներառյալ ատեստավորման, հնարավորությունների ընդլայնում՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների և մասնագիտական ստանդարտների հետ*

Հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 24-ին ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N ՀՕ-387-Ն օրենքի դրույթները, «Մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների և մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման կարգը և կամավոր ատեստավորման արդյունքով մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետներին և մանկավարժական աշխատողներին հավելավճարի տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Միաժամանակ, պետական բյուջեում նախատեսված ֆինանսական միջոցների վերանայման պահանջով պայմանավորված, ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկով միջոցառման կատարման ժամկետը տեղափոխվել է 2025 թվական:

Նախագծի հաստատումից հետո 2025 թվականի 4-րդ եռամսյակում կիրականացվի մասնագետների կամավոր ատեստավորումը:

- *Հեռավար կրթական ծառայությունների, էլեկտրոնային բաց պաշարների, առցանց դասընթացների ներդրում սովորողների այն խմբերի և դեպքերի համար, երբ առկա ուսուցումը հնարավոր չէ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս ժամանակավորապես բնակվող անչափահասների համար*

Ասիական զարգացման բանկի կողմից «Հեռավար կրթություն հանուն դիմակայության» ծրագրի շրջանակներում մշակվել է հեռավար կրթության հարթակ՝ սովորելու ավելի լայն հնարավորություններ ընձեռելով և տեղեկատվություն տրամադրելով՝ սովորողների համար ավելի հարմար ձևաչափով: Հարթակն օգնում է անցկացնել առցանց դասընթացներ և ուսուցիչներին ու սովորողներին տրամադրում է իրական ժամանակում հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ, հանձնարարությունների տրամա դրման և մոնիթորինգի ու ուսուցման աշակերտակենտրոն այլ գործիքներ: Տարվա ընթացքում մշակվել են հեռավար դասընթացների ևս 12 մոդուլներ /ընդամենը 36/, որոնք կիրառվում են հեռավար կրթության հարթակից օգտվող շահառուների կողմից:

Հեռավար ուսուցման մենթոր դպրոցների ծառայություններից օգտվող դպրոցների թիվը 95 է: Մենթոր դպրոցների թիվը 29 է:

Հեռավար դասավանդման վերաբերյալ վերապատրաստված ուսուցիչների թիվը 22.500 է:

- *Մուլտիմեդիա ձևաչափով հայրենագիտական ճանաչողական և տեղեկատվական նյութերի արտադրություն ու տարածում*

2024 թվականին ստեղծվել և տարածվել են մուլտիմեդիա ձևաչափով հետևյալ հայրենագիտական ճանաչողական և տեղեկատվական նյութերը.

1. ճանաչողական --

խաչվող հասկացություններ՝

https://www.youtube.com/watch?v=ZIP6OLFngdY

1.1 տեսադասեր հայոց լեզվից՝

https://www.canva.com/design/DAErA1dbnho/kmvlaQqzy0rDp_ZNW5TndQ/view?utm_content=DAErA1dbnho&utm_campaign=designshare&utm_medium=link&utm_source=publishsharelink

1.2. տեսադասեր գրականությունից՝

https://kznakbnagavar.blogspot.com/p/blog-page_1.html

2. տեղեկատվական -

2.1. Հայտորոշիչ գնահատման լուսաբանումը՝

https://kznakbnagavar.blogspot.com/2023/10/blog-post_18.html

- *Ավագ դասարաններում կրեդիտային համակարգի ներդրում, ներառյալ սովորողների նախասիրությունները և կարողությունները խթանող արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների զարգացման, դպրոցի և այլ կենտրոնների համագործակցության միջոցով*

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 27-ի N39-Ն հրամանով հաստատվել է «Միջնակարգ կրթության կրեդիտային համակարգի ներդրման և գործարկման կարգը»: Կրեդիտային համակարգի ներդրման նպատակն է հանրակրթական ուսումնական հաստատությունների և բուհերի միջև զարգացնել կրթական միասնական միջավայր, սովորողների համար հանրակրթությունից բուհական համակարգ անցումը դարձնել առավել դյուրին:

Կրեդիտային համակարգը փորձնական ներդրվել է ՀՀ Տավուշի մարզի թվով 4 ավագ դպրոցներում՝ համագործակցելով Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Ագրարային, ճարտարապետաշինարարական, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանների հետ: Երևանում գործող պետական համալսարանները կրեդիտային համակարգի ներդրումը փորձարկում են իրենց կազմում գործող ավագ դպրոցներում:

Սահմանվել է կրեդիտների ճանաչման ընթացակարգը: Ամփոփումն ու հետագա պլանավորումը նախատեսվում է իրականացնել 2025 թվականի ընթացքում: Դպրոցներն արդեն կրեդիտային համակարգով աշխատում են նաև բուհերի հետ, որպեսզի շրջանավարտները կրեդիտները կարողանան օգտագործել բուհական ուսումնառության շրջանակում: Համակարգի ներդնումը կիրականացվի մինչև 2030 թվականը:

Կարևոր բաղադրիչ է նաև արտադասարանական և արտադպրոցական ծառայությունների մատուցումը դպրոցների կողմից, որն ամրագրված է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրությամբ:

Ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի N09-Ն հրամանով հաստատվել է հանրակրթական ուսումնական հաստատության դպրոցական և անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի և խմբակների (այդ թվում՝ արտադասարանական ուսումնառության և ժամանցի կազմակերպմանն ուղղված խմբակների) երաշխավորման կարգը:

Հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման շրջանակում, բոլոր դպրոցներում ներդրվել են արտադասարանական և արտադպրոցական խմբակներ, որոնց ծրագրերը սահմանված ընթացակարգով հաստատվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով:

- *Արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի խրախուսման մեխանիզմների մշակում՝ կամավոր ատեստավորման միջոցով*

ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N269-Ն որոշմամբ հաստատվել է «Պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող մանկավարժական աշխատողների կամավոր ատեստավորման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարի տրամադրման կարգը»:

Ատեստավորմանը մասնակցելու հնարավորություն են ստացել սպորտի ոլորտում՝ 12 մարզաձևի մարզիչ-մանկավարժներ (նախկինում՝ 4 մարզաձև), մշակույթի ոլորտում՝ 8 ուղղության մանկավարժներ (նախկինում՝ 2 ուղղություն),

2024 թվականի ատեստավորմանը մասնակցել է 465 մանկավարժ և մարզիչ, իսկ ատեստավորված և բարձրացված աշխատավարձ ստացող արտադպրոցական մանկավարժների ընդհանուր թիվը 206 է (նախորդ տարվա համեմատ ցուցանիշը աճել է 5 անգամ):

Մշակույթի ոլորտում կամավոր ատեստավորված մանկավարժների մասնաբաժինը հասցված է՝ 7% է, սպորտի ոլորտում՝ 5%:

- *Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների համար առողջ սնվելու հնարավորությունների ապահովում*

Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտներին կայուն դպրոցական սննդով ապահովող դպրոցների մասնաբաժինը հասցվել է 86.2%: «Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում անվճար սնունդ ստանում են շուրջ 135 հազար երեխա՝ ՀՀ մարզերի դպրոցների 1-4-րդ դասարանների աշակերտներ և նախակրթարանների սաներ: Սնունդ ստացող երեխաների մասնաբաժինը հասցված է 70.5%-ի:

Նպատակ 3.Հանրակրթական ուումնական հաստատություններում անվտանգ, հագեցած և արդիական սովորելու միջավայրի և ռեսուրսների ապահովում

- *Հանրակրթական ուսումնական հաստատությունների նպատակային քարտեզի կազմում՝ ներառյալ հաստատությունների տեղաբաշխումը և շենքային պայմանների գնահատումը՝ հիմնվելով Կապան խոշորացված համայնքի փորձնական ծրագրի արդյունքների վրա*

Առկա է հանրակրթական ուսումնական հաստատությունների նպատակային քարտեզ բոլոր մարզերի և Երևան քաղաքի համար: Հանրակրթական ուսումնական հաստատությունների տեղաբաշխման ցանկերը հաստատվել են՝

ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 6-ի N491–Ն որոշմամբ՝ Սյունիքի մարզ, ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 4-ի N682 –Ն որոշմամբ՝ Արարատի և Կոտայքի մարզեր,

ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 25-ի N823 –Ն որոշմամբ՝ Արագածոտնի, Գեղարքունիքի, Արմավիրի մարզեր,

ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի N977 –Ն որոշմամբ՝ Վայոց Ձորի, Տավուշի մարզեր, Կապանի 4 դպրոց,

ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 6-ի N1140-Ն որոշմամբ՝ Լոռու, Շիրակի մարզեր,

ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N2093-Ն որոշմամբ՝ Երևան քաղաք:

- *Համաձայն գնահատված արդյունքների՝ հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, այդ թվում՝ սեյսմիկ*

անվտանգության ապահովում, փոքրաքանակ աշակերտական համակազմ ունեցող բնակավայրերում մոդուլային դպրոցական շենքերի կառուցում, ըստ անհրաժեշտության՝ հիմնանորոգման, վերակառուցման և վերանորոգման այլ աշխատանքներ

2021-2024 թվականներին կառուցվել, վերակառուցվել և հիմնանորոգվել է 44 դպրոց՝ այդ թվում կառուցում՝ 30-ը, վերակառուցում՝ 3-ը, վերանորոգում/հիմնանորոգում՝ 11-ը:

• *Հանրակրթական ուսումնական հաստատություններում աղետների դիմակայունության և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու պայմանների ապահովում և կարողությունների զարգացում*

Հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնաբաժինը, որոնք իրականացրել են հաստատված աղետների ռիսկերի կառավարման պլանի 100%-ը, հասցված է՝ 75%-ի:

Աղետների ռիսկի կառավարման և ճգնաժամային իրավիճակներին արձագանքելու վերապատրաստման դասընթացներին մասնակցած աշխատակիցների մասնաբաժինը հասցված է 30%-ի: Թաքստոցներ/ապաստարան ունեցող դպրոցների մասնաբաժինը ևս հասցված է 30%-ի:

• *Նոր չափորոշչին և առարկայական ծրագրերին համապատասխան՝ անհրաժեշտ գույքով և սարքավորումներով հագեցվածության ապահովում*

Անհրաժեշտ ուսումնաօժանդակ նյութերով, սարքավորումներով և ենթակառուցվածքներով համալրված դպրոցների մասնաբաժինը հասցված է շուրջ 55%-ի /648 դպրոց՝ 1168-ից/: Համալրվող դպրոցների ցանկում ներառված չեն սակավաթիվ աշակերտներ ունեցող 232 դպրոցները, որոնք, համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի «Հայաստանի Հանրապետության կրթական որակյալ ծառայությունների հասանելության ապահովման ծրագրում ներառված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը հաստատելու մասին» N 1790-Ա/2 հրամանի, շարունակում են ֆինանսավորվել ըստ աշակերտների թվի:

Ինչ վերաբերում է նախապատրաստական աշխատանքներին՝ ՀՀ և Եվրոպական հանձնաժողովի միջև կնքված «Հայաստանում ԵՄ աջակցությունը կրթությանը» ֆինանսավորման համաձայնագրով 2025-2026թթ. նախատեսվում է ՀՀ Արարատի, Կոտայքի ու Գեղարքունիքի մարզերի մնացած դպրոցները (2024թ.՝ 72, 2026թ.՝ 55) ապահովել ժամանակակից բնագիտական լաբորատոր սարքավորումներով: Միաժամանակ 2025 թվականին Համաշխարհային բանկի «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրի շրջանակներում, նախատեսված է ՀՀ Սյունիքի և Վայոց ձորի 41 դպրոցները, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ՀՀ պետական բյուջեով՝ ՀՀ Լոռու և Շիրակի մարզերի դպրոցներն ապահովել ժամանակակից լաաբորատոր սարքավորումներով:

Նպատակ 4.Հանրակրթական հաստատությունների շախսարդյունավետ կառավարման և ֆինանսավորման մոդելների ներդրում

• *Հանրակրթական ուսումնական հաստատությունների բովանդակային և վարչատնտեսական կառավարման գործառույթների տարաբաժանում և առանձնացված իրականացում*

2024 թվականի դրությամբ վարչատնտեսական կենտրոնացված կառավարման անցած դպրոցների ընդհանուր թիվը կազմում է 437:

• *Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների խոշորացում*

Հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների խոշորացման գործընթացի իրականացման նպատակով, հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման նոր մոդելի ներդրման գործընթացին զուգընթաց, վերանայվել է կառավարման խորհուրդների ձևավորման կարգը:

Խոշորացվել են դպրոցական խորհուրդները. ներկայում գործում են 286 դպրոցական խորհուրդներ՝ նախկինում գործող 904-ի փոխարեն: Գործընթացն ավարտված է:

• *Հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունների պատվիրակում տեղական ինքնակառավարման մարմիններին*

Հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակելու նպատակով նախաձեռնվել է համագործակցություն «Սալար Ինթերնեշնլ» կազմակերպության հետ: Հանրակրթական հաստատությունների կառավարման լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակելու ուղղությամբ, ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 26-ի N790-Լ որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան խոշորացված համայնքի գյուղական բնակավայրերում կրթական որակյալ ծառայությունների հասանելության ապահովման փորձնական ծրագրի» օրինակով, «Աջակցություն ՀՀ-ում ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումների» ծրագրի շրջանակներում հաստատվել է 10 համայնք /Վայք, Մասիս, Խոյ, Հրազդան, Ախուրյան, Տաշիր, Մարտունի, Տաթև, Վանաձոր, Վաղարշապատ/:

• *Դպրոցների ֆինանսավորում կարգի փոփոխություն՝ անցում կատարելով դասարանների թվով ֆինանսավորմանը և կրթության առանձահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նպատակային արդյունավետ ֆինանսավորմանը*

ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոնի 31-ի N1485-Ն որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 1481-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգի մեջ: Նոր կարգն ուժի մեջ է մտել 2023 թվականի սեպտեմբերի 1-ից և տարածվում է ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրում չներառված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա: Միաժամանակ այս խմբի հանրակրթական ուսումնական հաստատությունների վրա տարածվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N79-Ն հրամանով հաստատված ՀՀ

հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցները և նորմատիվները: Համաձայն հրամանի, համադպրոցական ծախսը ի թիվս այլ ծախսերի, իր մեջ ներառում է՝

- հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի հարմարեցումների համար նախատեսված ծախսերը, որը հաշվարկվում է երեք տարվա կտրվածքով 3,300.0 հազ. դրամ (յուրաքանչյուր տարի 1,100.0 հազ. դրամ) և տրվում է այն հաստատություններին, որոնք հարմարեցված չեն ներառական կրթությանը կամ ընդգրկված չեն այդ նպատակով ֆինանսավորվող ծրագրերում, ինչպես նաև առաջիկա երեք տարիների ընթացքում չի նախատեսվում հաստատությանն ամրացված անշարժ գույքի հիմնանորոգում: Այդ հաստատությունների ցանկը կազմելու նպատակով ներկայումս իրականացվում են ուսումնասիրություններ և քննարկումներ, որոնց արդյունքները կտրամադրվեն հաստատության կառավարումն իրականացնող լիազոր մարմիններին,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացում խելամիտ հարմարեցումներ ապահովելու նպատակով տրամադրվող նպատակային ֆինանսավորումը, որը հաշվարկվում է հաստատությունում սովորող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թիվը բազմապատկելով 27 հազար դրամի:

- *Դպրոցների լրացուցիչ ֆինանսավորման մեխանիզմի ներդրում բարձր և ցածր կատարողական ցուցանիշներ ունեցող դպրոցների խրախուսման և զարգացման համար*

Մեխանիզմը ներդնելու նպատակով «Հանրակրթության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 18.2) կետով ավելացվել է լիազորող նորմ, այն է՝

«Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասություններն են՝

18.2) սահմանում է բարձր կատարողականի արդյունքով ուսումնական հաստատություններին խրախուսելու, ինչպես նաև ցածր կատարողականի արդյունքով աջակցելու նպատակով լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու կարգը»:

«Բարձր կատարողականի արդյունքով ուսումնական հաստատություններին խրախուսելու, ինչպես նաև ցածր կատարողականի արդյունքով աջակցելու նպատակով լրացուցիչ ֆինանսավորում տրամադրելու կարգ»-ի նախագիծը սահմանված կարգով կշրջանառվի և կհաստատվի 2025 թվականի առաջին կիսամյակում:

Միջոցառման իրականացումը նախատեսվում է 2026 թվականին, որը պայմանավորված է բյուջեում նախատեսված ֆինանսական միջոցների վերանայման պահանջով:

ՆԱԽՆԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) բովանդակության և մասնագիտական ներուժի արդիականացում ու հզորացում՝ աշխատաշուկայի և ժամանակից մասնագիտական պահանջներին համահունչ:

• *Նախնական և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) պետական կրթական չափորոշիչների և դրանց համապատասխան մոդուլային ծրագրերի մշակում ու վերանայում՝ երկրի և միջազգային արդի պահանջներին համապատասխան*

Վերանայվել են արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկերը: Փաթեթը ներկայացվել է հանրային քննարկման և ՀՀ վարչապետի 2008 թվականի դեկտեմբերի 11-ի N1012-Ա որոշմամբ հաստատված՝ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի քննարկմանը: Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհրդի՝ 2024 թվականի դեկտեմբերի 3-ին հրավիրված նիստում վերանայված ցանկերը հաստատվել են:

Մշակվել և վերանայվել են 22 ՄԿՈՒ մասնագիտությունների և որակավորումների համար պետական կրթական չափորոշիչներ, մասնավորապես՝ «Կախովի ճակատային համակարգերի մոնտաժում», «Թռչող ապարատների ավիացիոն և ռադիոէլեկտրոնային սարքավորումների տեխնիկական շահագործում», «Ռոբոտացված տրանսպորտային միջոցների շահագործում և սպասարկում», «Կիբեռանվտանգություն», «Կաթնաֆերմերային տնտեսության կազմակերպում», որոնք 2025-2026 ուսումնական տարվանից կկիրառվեն ՄԿՈՒ ուսումնական հաստատություններում:

Ներկայումս 2008 թվականից առ այսօր մշակված ՊԿՉ-ների ընդհանուր թիվը (այդ թվում՝ այլ կառույցների կողմից մշակված) 286 է, իսկ վերանայվածների ընդհանուր թիվը՝ 190 է:

• *Աշխատանքի վրա հիմնված ուսումնական (ԱՀՈՒ) ծրագրերի օրենսդրական և ինստիտուցիոնալ ներդրում*

2024թ. մշակվել է աշխատանքի վրա հիմնված/դուալ ուսուցման 5 ծրագիր և 2024-2025 ուսումնական տարվանից ներդրվել ՄԿՈՒ 8 հաստատությունում:

Վերոնշյալ մասնագիտություններն են.

ա/ 0812.01.4 «Այգեգործություն» մասնագիտության 0812.01.02.4 «Պտղատու այգիների այգեգործ» որակավորումը,

բ/ 0811.13.5 «Կաթնաֆերմերային տնտեսության կազմակերպում» մասնագիտության 0811.13.01.5 «Կազմակերպիչ՝ կաթնաֆերմերային տնտեսության» որակավորումը,

գ/ 0716.17.5 «Գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտության 0716.17.01.5 «Տեխնիկ՝ գյուղատնտեսության մեքենայաց ման» որակավորումը:

2024-2025թթ. ևս 2 հետևյալ մասնագիտությունով դուալ ուսուցման ձևով ծրագրեր ներդրվել են Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում՝

ա/ «Հաշվողական տեխնիկայի միջոցների և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկում» մասնագիտության 0612.02.01.5 «Տեխնիկ՝ հաշվողական տեխնիկայի և համակարգչային ցանցերի տեխնիկական սպասարկման» որակավորումը,

բ/ 0413.01.5 «Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի)» մասնագիտության 0413.01.01.5 «Մենեջեր՝ առևտրի» որակավորումը:

Ընդհանուր առմամբ, 2024 թվականի դրությամբ դուալ ուսուցմամբ կրթական ծրագրեր իրականացվում են 20 ՄԿՈՒ հաստատությունում՝ 27 մասնագիտություններով: Արդյունքում, այս մոդելով իրականացվող մասնագիտությունների մասնաբաժինը հասել է 17%-ի, իսկ ուսումնական հաստատություններինը՝ 23%-ի:

- *ՆՄՄԿ որակի ապահովման համակարգի բաղադրիչների ներդրում՝ համապատասխան լիցենզավորման, ինստիտուցիոնալ հավաստագրման, ծրագրային հավատարմագրման, միջազգային ստանդարտներին և մշակված չափանիշներին*

ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 29-ի N1374-Ն որոշմամբ լրացումներ ու փոփոխություններ են կատարվել՝ «Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց կրթական ծրագրերի պետական հավատարմագրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի N978-Ն որոշման մեջ:

2024թ. իրականացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց 20 ՆՄՄԿ հաստատությունում: Հավատարմագրված հաստատությունների մասնաբաժինը՝ հասցվել է 31.7 %-ի:

- *Արագ և ճկուն որակավորում ապահովող մեխանիզմների մշակում և գործարկում, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթության արդյունքում միկրոորակավորումների ճանաչման միջոցով*

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքն ամբողջությամբ ընդունվել է ԱԺ կողմից 2024 թվականի մայիսի 22-ին երկրորդ ընթերցմամբ, ուժի մեջ է մտել 2024թ. հունիսի 24-ին: Նոր Օրենքը համակարգային փոփոխություններ է մտցնում ոլորտում՝ առանցքային դարձնելով աշխատանքի վրա հիմնված ուսուցումը, մասնավորի հետ համագործակցությունն ու տնտեսության հետ կապը: ՀՀ վարչապետի 2024 թվականի հոկտեմբերի 10-ի N 914-Ա որոշման հավելվածով հաստատվել է օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը, որով նախատեսվում է մշակել արագ և ճկուն որակավորում ապահովող մեխանիզմներ, դրանց մեթոդական և այլ իրավական հիմքեր, որոնց ուղղությամբ աշխատանքները մեկնարկել են:

- *ՆՄՄԿ ոլորտի մանկավարժների պատրաստման/վերապատրաստման, ինչպես նաև ատեստավորման համակարգերի ներդրում՝ նպաստելով կարողությունների զարգացմանը և այն փոխկապակցելով աշխատանքի վարձատրության բարձրացմանը*

Հաստատվել է «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորման հանձնաժողով ների ձևավորման, դրանց գործունեության և ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման և ատեստավորման կարգը»:

Առանձին հրամաններով հաստատվել են՝

ատեստավորման հետևյալ 4 ուղղությունները՝ ոսկերչություն, խոհարարություն, գյուղատնտեսություն և տեղեկատվական տեխնոլոգիաներ,

նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների 2024 թվականի վերապատրաստման դասընթացի և ատեստավորման ուղղությունները,

ՆՄՄԿ ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատողների 2024թ. ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմը՝ ըստ ուղղությունների,

նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողին վերապատրաստող կազմակերպությունների ցանկը և դասընթացների ծրագրերը և այլն:

2024 թվականի սեպտեմբերի 10-ից մեկնարկել են մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների՝ ատեստավորման ենթակա մանկավարժական աշխատողների վերապատրաստման դասընթացները:

Վերապատրաստման գործընթացին մասնակցել է 361 անձ, որոնցից ատեստավորվել է 310-ը: Ատեստավորման արդյունքում մասնակիցների 89%-ը՝ 276 մանկավարժ, հաղթահարել են նվազագույն շեմը և համարվել ատեստավորված: Ատեստավորված մանկավարժների դրույքաչափը դարձել է 200.000 ՀՀ դրամ, իսկ այն մանկավարժները, որոնք գրանցել են 70%-ից բարձր արդյունքներ՝ 224 մանկավարժ, ստանում են նաև 30%, 40%, 50% հավելավճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 5-ի «Մասնագիտական ուսումնական հաստատությունների ատեստավորված կամ տարակարգ ստացած մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխության և հավելավճարի սահմանման կարգը և չափը հաստատելու մասին» N 1912-Ն որոշման: Արդյունքում, վարձատրու թյունը գրեթե կրկնապատկվել է ատեստավորված մանկավարժների համար:

ՄԿՈՒ հաստատություններում հանրակրթական առարկաներ դասավանդող 130 մանկավարժ մասնակցել է ուսուցիչների կամավոր ատեստավորմանը, որոնցից 88-ը հաղթահարել են նվազագույն շեմը, և նրանցից 16-ը կունենան դրույքաչափի փոփոխություն, իսկ 72-ը՝ նաև կստանա հավելավճար: Ուսուցիչների կամավոր ատեստավորմանը մասնակցած և դրական արդյունք ցուցաբերած ՄԿՈՒ մանկավարժների ընդհանուր թիվը կազմում է 152:

Միաժամանակ 2024 թվականի ընթացքում վերապատրաստում են անցել.

- 170 տնօրեն և փոխտնօրեն՝ «ՄԿՈՒ հաստատությունների ռազմավարական կառավարում» թեմայով.
- 44 ՄԿՈՒ հաստատությունների ղեկավարներ՝ «Կոռուպցիայի կանխարգելումը կրթության միջոցով» թեմայով.
- 816 մանկավարժական աշխատող:

Նպատակ 2. Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության (ՆՄՄԿ) ընդլայնում և մատչելի, ներառական, անվտանգ միջավայրի զարգացում ու հասանելիության ապահովում բնակչության բոլոր խմբերի համար

• *ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավում՝ համաձայն քարտեզագրման արդյունքների և որոշված առաջնահերթության՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանված նորմերը*

Ներկայում ընթացքի մեջ են 6 ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավ ման՝ վերանորոգման և կառուցման աշխատանքները, որից 1-ը՝ կառուցում, 1-ը ՝ վերակառուցում, 1-ը՝ հիմնանորոգում, 3-ը՝ մասնակի նորոգում: Եվս 2 ուսումնական հաստատությունում աշխատանքներն ավարտվել են և գտնվում են վերջնական փաստաթղթերի հանձնման-ընդունման՝ ավարտական ակտի կնքման փուլում: 2 ուսումնական հաստատություն գտնվում են ՇՄԱԳ փորձաքննության փուլում: 2 ուսումնական հաստատություն էլ գտնվում են նախահաշվային փաստաթղթերի լրամշակման փուլում*:*

ՄԿՈՒ հաստատությունների օպտիմալացման ծրագրերի շրջանակում վերակազմակերպվել է 3 ուսումնական հաստատություն:

• *ՆՄՄԿ հաստատությունների նյութատեխնիկական բազայի համալրում և արդիականացում՝ համաձայն քարտեզագրման արդյունքների և որոշված առաջնահերթության*

2024 թվականի բյուջեով նախատեսվել է 2 ուսումնական հաստատության գույքի տրամադրում, որոնց համար մշակվել են գնման հայտերի նախագծերը և ներկայացվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ստեղծված համապատասխան հանձնա ժողովին:

7 ՄԿՈՒ հաստատություններին տրամադրվել է 7 համակազմ մասնագիտական ուսումնալաբո ռատոր բազա, մասնավորապես,

1.բեմի լուսաձայնային համակարգ,

2. ավտովարման լաբորատորիա՝ հագեցած ավտոմեքենա վարելու սիմուլյատորներով Սիսիանի պետական քոլեջում,

3. եռակցման լաբորատորիա՝ հագեցած ժամանակակից եռակցման սարքավորումներով և աքսեսուարներով եռակցման լաբորատորիայի հարակից կոնֆերանսների սրահի հետ միասին Վարդենիսի պետական քոլեջում ,

4. արևային էներգիայի լաբորատորիա՝ հագեցած ֆոտոգալվանային ուսուցման նստարաններով և կրթական կահույքով Աբովյան Էներջի Փաուեր պետական քոլեջում,

5. ժամանակակից կարի մեքենաներով, համապատասխան այլ սարքավորումներով, պարագաներով, ուսումնական կահույքով հագեցած կարի լաբորատորիա-Աբովյանի պետական քոլեջում,

6. ՀԱԱՀ Վանաձորի մասնաճյուղի համար հիմնական գույք, կահույք, մասնագիտական լաբորատորիաներ,

7. Վանաձորի Մ.Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի համար՝ հիմնական գույք:

Միևնույն ժամանակ աբողջական գույքային և ուսումնալաբորատոր հագեցվածություն նախատեսված է ապահովել ներկայումս վերանորոգման, վերակառուցման ընթացքում գտնվող՝ թվով 6 մասնագիտական ուսումնական հաստատություններում: Այն հնարավոր կլինի ապահովել շինարարական աշխատանքների ավարտից և շենքերն ու ենթակառուցվածքները շահագործման հանձնելուց հետո:

- *Մարզերում գործող ՆՄՄԿ հաստատությունների սովորողների և մանկավարժական աշխատողների տրանսպորտային փոխհատուցման գործիքակազմի ներդրում*

Գործում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 12-ի N147-Ն հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ուսանողներին և մանկավարժական աշխատողներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցելու կարգը»: Գործող կարգի համաձայն՝ տրանսպորտային ծառայությունների համար մշակված չափանիշներին համապատասխանող փոխհատուցում ստացել են՝

- 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի տվյալներով՝ մանկավարժ-142, ուսանող-5700,
- 2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի տվյալներով՝ մանկավարժ – 148, ուսանող – 6560:

Գործընթացը կրում է շարունակական բնույթ:

- *ՆՄՄԿ ոլորտում ներառական կրթության փորձնական ծրագրի մշակում և իրականացում, ՆՄՄԿ ոլորտում անցում համընդհանուր ներառականության*

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից 2024 թվականին ՆՄՄԿ ոլորտում ԿԱՊԿՈՒ գնահատվել է 35 ուսանող: Հանրապետությունում գործող Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հետ համատեղ հոգեբանական խորհրդատվություն և աջակցություն է ստանում ՄԿՈ-ի ոլորտի 58 ուսանող:

Միաժամանակ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի մայիսի 2-ի N 589-Ա/2 հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը»:

- *ՆՄՄԿ հաստատությունների՝ մասնավոր ոլորտի հետ համատեղ կառավարման ձևաչափերի ներդրում*

Պետություն-մասնավոր ոլորտի հետ համատեղ կառավարման ձևաչափերի զարգացման նպատակով «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» նոր օրենքով սահմանվել է հանրային ՄՈՒՀ հասկացությունը: Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի՝ հանրային ՄՈՒՀ-ը հիմնադրվում է պետության և ոչ պետական կազմակերպության միջև (այդ թվում՝ օտարերկրյա) համագործակցության պայմանագրի հիմքով: Օրենքում համապատասխան դրույթի նախատեսումը ենթադրում է ենթաօրենդրական ակտերի մշակում (օրինակ՝ օրինակելի կանոնադրություն) և հանրային ՄՈՒՀ-ի՝ որպես իրավաբանական անձի գործունեության հստակ սահմանում:

Արդեն իսկ գործում է Տավուշի Պատրիկ Ֆրանսիայում հայկական հիմնադրամի հետ համատեղ ստեղծված և կառավարվող «Տէվէճեան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամը, որտեղ իրականացվում են բովանդակային և շենքային պայմանների շարունակական բարելավման աշխատանքներև զարգացման ծրագրեր:

Միևնույն ժամանակ, բանակցություններ են տարվում Ֆրանսիայում հայկական հիմնադրամի, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ «պետություն-մասնավոր ոլորտ» համագործակցության մոդելով ուսումնական հաստատություն ստեղծելու հարցը:

- *Ֆինանսավորման, այդ թվում՝ պետական, տարբերակված քաղաքականության գործարկում հանրապետական նշանակության ՆՄՄԿ հաստատություններում*

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» նոր օրենքում էականորեն տարբեր մոտեցումներ և սկզբունքներ են նախատեսվել մասնագիտական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման համար, ինչպես օրինակ սահմանվել են ֆինանսավորման հիմնական տեսակները, դուալ ուսուցման կազմակերպման համար ֆինանսավորման այլ մեխանիզմ, կրթաթոշակի (տեսակների և բաղադրիչների)՝ որպես ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման գաղափարը և այլն:

Մշակվել է «Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և կատարվել է ուսուցանվող մասնագիտությունների ծախսակազմման հաշվարկը:

Նախատեսվում է ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների ֆինանսավորման կարգի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնել 2025 թվականի ապրիլի 1-ին տասնօրյակին:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Համընդհանուր ներառական, սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամաններով հաստատված են են հետևյալ 21 որակավորումների ոլորտային շրջանակ (ՈՈՇ)՝

«Շինարարություն», «Անասնաբուժություն», «Ֆարմացիա», «Գյուղատնտեսություն», «Բժշկու թյուն», «Մանկավարժություն», «Սոցիոլոգիա», «Պատմություն», «Ճարտարապետություն», «Իրավա գիտություն», «Մաթեմատիկա»,

«Ինֆորմատիկա», «Սոցիալական աշխատանք», «Ֆիզիկա», «Երկրաբանություն», «Փիլիսո փայություն», «Քիմիա», «Աշխար հագրություն», «Սերվիս»:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերը վերանայվել և համապատասխանեցվել են առկա որակավորումների ազգային շրջանակին (ՈԱՇ) և որակավորումների ոլորտային շրջանակներով (ՈՈՇ) սահմանված վերջնարդյունքներին:

Համապատասխանեցված կրթական ծրագրերի մասնաբաժինն ընդհանուրի մեջ կազմում է շուրջ 30%:

Շարունակաբար վերանայվում են կրթական ծրագրերը, որոնցում ներառվում է «կանաչ կրթության» սկզբունքը: Վերանայված կրթական ծրագրերը կազմում են ընդհանուր կրթական ծրագրերի 5%-ը:

Գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդհանուր թվի 25%-ն ապահովված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների

համար նվազագույն անհրաժեշտ ֆիզիկական միջավայրի խելամիտ հարմարեցումներով (թեքահարթակ, սանհանգույց, վերելակ և այլն):

Ազգային փոքրամասնությունների համար բարձրագույն կրթության հասանելիության շարունակական ապահովման նպատակով, ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 12-ի N 488-Ն որոշմամբ բարձրագույն կրթության համակարգում ազգային փոքրամասնությունների համար 2024-2025 ուսումնական տարվա համար հատկացվել է 7 նպատակային տեղ, որոնք Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից բաշխվել են վճարովի համակարգ ընդունված առավել բարձր միավոր հավաքած ազգային փոքրամասնություններին պատկանող դիմորդներին:

Գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների առնվազն 10%-ում (հիմք ընդունելով բուհերից ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքները) ներդրված են հեռավար կրթական ծառայությունները, էլեկտրոնային բաց պաշարները, առցանց դասընթացները:

Միասնական և ներբուհական ընդունելության կարգերով բուհեր են ընդունվել 10.720 ուսանողներ, ինչը կազմում է ավագ դպրոցի շրջանավարտների 52,3%-ը: Ընդ որում՝ պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ 2024-2025 ուսումնական տարվա համար նախատեսված 2.096 տեղից բնագիտամաթեմատիկական (STEM) ոլորտին հատկացվել է 1.264-ը՝ ընդհանուր տեղերի թվի 61%-ը:

ՀՀ կառավարության 2024 թվական մայիսի 16-ի N 701-Ն որոշմամբ հաստատվել են Պետության կողմից ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ ասպիրանտուրային 2024/2025 ուսումնական տարվա ընդունելության տեղերը, որոնց թիվը կազմում է 270 (առկա 180, հեռակա 90):

Շարունակվել է պետության կողմից ԲՏՃՄ ուղղություններով մասնագիտական մանկավարժության ծրագրով սովորողների խրախուսման ծրագիրը՝ ամսական 70.000 ՀՀ դրամ կրթաթոշակի միջոցով, որի շրջանակներում 2024-2025 ուսումնական տարում բուհեր է ընդունվել 304 ուսանող՝ նախորդ ուսումնական տարում ընդունվածներից շուրջ 20%-ով ավելի: Այս քաղաքականությունը 2024 թվականից տարածվել է նաև ագրարային ոլորտի մասնագիտությունների վրա: Ըստ 2024-2025 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների՝ ագրարային ոլորտի նշված մասնագիտություններով բուհ է ընդունվել 220 ուսանող:

ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 383-Ն որոշմամբ հաստատվել են բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու կարգը և պայմանները, որի շրջանակներում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից տարկետում են ստացել 2023-2024 ուսումնական տարում շուրջ 100 արական սեռի քաղաքացի (ՀՀ կառավարության 2023 թվականի հուլիսի 27-ի N 1290-Ա որոշման), 2024-2025 ուսումնական տարում շուրջ 134 ուսանող (ՀՀ կառավարության 2024 թվականի օգոստոսի 15-ի N 1293-Ա որոշման):

Բարձրագույն ուսումնական հաստատությունների (այդ թվում՝ գիտակրթական կազմակերպությունների հետ համատեղ օգտագործման) լաբորատոր և նորարարական

ենթակառուցվածքների ու միջբուհական, միջառարկայական փորձարարական թեմատիկ լաբորատորիաների և գիտակրթական ամբիոնների արդիականացման ու համալրման նպատակով՝ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրի (ՀԲ)՝ «Աջակցություն Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) զարգացմանը» բաղադրիչի շրջանակում ԲՏՃՄ (STEM) ուղղություններով 5 բուհերի հատկացվել է 680.9 մլն. ՀՀ դրամ, որը բուհերի կողմից համաֆինանսավորվել է հավելյալ 157.4 մլն. ՀՀ դրամով, մասնավորապես՝

- ✓ Երևանի պետական համալսարանի և ՀՀ ԳԱԱ Ա. Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ կոնսորցիումի (նախատեսում է ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետում ստեղծել Օպտիկական համակարգերի միկրոմշակման և հետազոտման գիտակրթական նորարար կենտրոն, որի նպատակն է համալսարանական կրթության հետազոտական բաղադրիչի զարգացումը, միջգիտակարգային հետազոտությունների խթանումը, բարձր տեխնոլոգիաների բնագավառի կադրերի պատրաստումը, ինչպես նաև գիտության, կրթության և արդյունաբերության միջև նոր կապերի ձևավորումը),
- ✓ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (նախատեսում է ինժեներական համակարգերի մոդելավորման, նախագծման և կառավարման համապատասխան կրթական ծրագրերի դասավանդման-ուսումնառության կատարելագործմանը, գիտահետազոտական գործունեության զարգացմանը և առևտրայնացմանը (կրթությունգիտություն-բիզնես կապի ամրապնդում), կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներգրավմանը, խելացի լուծումների կիրառմանը և բուհի ուսումնագիտական գործառույթների ընդլայնմանն ու կարողությունների հզորացմանը միտված առկա լաբորատոր բազայի համալրում՝ միջառարկայական կիրառություն ունեցող նորագույն փորձասարքերով),
- ✓ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի և ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի կոնսորցիումի (նախատեսում է ստեղծել ուղեղի վիզուալիզացիայի լաբորատորիա, որը միավորելով գերժամանակակից մանրադիտարկման, բջջային հաշվարկի, լրացված ու վիրտուալ իրականության առանձնահատկությունները, հնարավորություն կընձեռի համակողմանիորեն պատկերավորել գլխուղեղի բջջային ճարտարագիտությունը՝ համալրելով այն զգայական ներգրավվածությամբ. լաբորատորիան օժտված կլինի գլխուղեղի բջիջների ստատիկ և դինամիկ «5D» պատկերման, ինչպես նաև դեղի կամ ներմուծված բջջի «առաքումը» գլխուղեղ վիզուալիզացնելու հնարավորությամբ),
- ✓ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (նախատեսում է «Գյուղատնտեսական ռոբոտաշինության և մեխատրոնիկայի ագրարային ճարտարագիտության գերազանցության կենտրոնի» ստեղծում, որը կներառի Գյուղատնտեսական ռոբոտների (ագրոբոտեր) մշակման և նախագծման լաբորատորիա, AgrobotLAB, Ծրագրավորման լաբորատորիա՝ ITLab, Ագրարային ճարտարագիտության վերազինված և նոր ուսումնական լսարաններ և լաբորատորիաներ),

- ✓ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (նախատեսում է զարգացնել ԲՏՃՄ ոլորտում սովորող ապագա մանկավարժների (ուսանողների) և գործող ուսուցիչների ուսուցչամեթոդական, հետազոտական և ստեղծագործական հմտությունները՝ ստեղծելով նյութատեխնիկապես հագեցած գերազանցության կենտրոն, որն իր մեջ կներառի և կկոորդինացնի ՀՊՄՀ-ում գործող ֆիզիկայի, կենսաքիմիայի, տեխնոլոգիայի, ինֆորմատիկայի լաբորատորիաներ, ինչպես նաև՝ հիմնել գիտական միջոցառումների և վերապատրաստման ժամանակակից սրահ, մասնագիտական կողմնորոշման և նախնական փորձառության ձևավորման լսարան, վիրտուալ մասնագիտական փոխգործակցության համացանցային հարթակ):

Նպատակ 2. Բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 23-ի N 79-Լ հրամանով հաստատվել են բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության՝ կատարողականի արդյունքային ցուցանիշները (KPI), 7 ուղղություններով Կրթական ծրագրեր/Կրթության կազմակերպում, Գիտահետազոտական/ստեղծագործական աշխատանք, Մարդկային ռեսուրսների զարգացում և առաջխաղացում (մասնագիտական առաջընթաց), Կառավարում, ներքին միջավայր և ենթակառուցվածքներ, բուհ-աշխատաշուկա համագործակցություն, Համագործակցություն կրթական հաստատությունների միջև, Միջազգայնացում) և ծրագրային արդյունքներով ֆինանսավորման մեխանիզմները, դրանց կիրառման մեթոդական ուղեցույցը: Նախատեսվում է նաև բուհերի ֆինանսավորման նոր բանաձևի մշակման ընթացքում ներդնել կատարողականի արդյունքային ցուցանիշներով սահմանված ֆինանսավորման կշիռներ:

Երևանի պետական համալսարանում նոր գերհամակարգչային կենտրոնի ստեղծման և գերհամակարգչի ձեռք բերման համար հատկացվել է 3,4 մլրդ ՀՀ դրամ, իսկ տվյալների կենտրոնի ստեղծման համար 2025 թվականին նախատեսված է հատկացնել 1.2 մլրդ ՀՀ դրամ:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների առնվազն 60%-ում ներդրված են կրթության կազմակերպման և կառավարման էլեկտրոնային հարթակներ:

Ընթացքի մեջ են Կրթության կառավարման տեղեկատվական հարթակի ամբողջականացման և գործարկման աշխատանքները:

«Ակադեմիական քաղաք» ծրագրի շրջանակներում՝

- ✓ պատրաստ է գլխավոր հատակագծի հայեցակարգը, որի մշակման աշխատանքներն իրականացվել են գերմանական ՋիԷմՓի ինթերնեյշնլ ՋիԷմԲիԷյջ արքիթեքթս ընդ էնջինիերս ընկերությանը (այսուհետ՝ ՋիԷմՓի) ճարտարապետական հեղինակավոր ընկերության կողմից,
- ✓ մեկնարկել է Ակադեմիական քաղաքի կառավարման շրջանակի, նորարարությունների կառավարման մոդելի, բուհերի և հետազոտական ինստիտուտների խոշորացման հայեցակարգի մշակումը Մյունխենի տեխնիկական համալսարանի հետ

կնքված պայմանագրով, որի շրջանակներում մշակվելու է նաև «Ակադեմիական քաղաքի» տեխնոլոգիական կլաստերի կառավարման համակարգը,

- ✓ մեկնարկել է Ակադեմիական քաղաքի քաղաքաշինական զարգացման ռազմավարական շրջանակի մշակումը գերմանական RSUP ընկերության հետ կնքված պայմանագրով, որը ներառում է սոցիալ-տնտեսական, քաղաքաշինական զարգացման մոդելները, ինչպես նաև գույքերի կառավարման առաջարկները,
- ✓ մեկնարկել է Ակադեմիական քաղաքի տրանսպորտային շարժունակության նախագծի մշակումն իտալական Սիստեմատիկա ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակում, որը ներառում է նաև Ակադեմիական քաղաքի տրանսպորտային ներքին ցանցի և արտաքին տրանսպորտային համակարգերի հետ կապակցվածության ուսումնասիրությունն ու հայեցակարգի ներկայացումը,
- ✓ Ակադեմիական քաղաքի համար մշակված լանդշաֆտային դիզայնի համաձայն ամբողջացվում է նաև Բուսաբանության ինստիտուտի կողմից անհրաժեշտ ջերմոցային տարածքների պատրաստման և նախանշված բուսատեսակների աճեցման աշխատանքների պայմանագիրը՝ Ակադեմիական քաղաքի կանաչապատման նպատակով,
- ✓ ամբողջացվում է նաև ՋիԷմՓի գերմանական կազմակերպության հետ գլխավոր հատակագծի վերջնականացման աշխատանքների համար պայմանագիրը: Այս աշխատանքները կներառեն նաև Ակադեմիական քաղաքի համար անհրաժեշտ կոմունիկացիոն նախագծերը, ինչպես նաև տարածքում առկա բարձրավոլտ էլեկտրասյուների տեղափոխումը:

Բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի շրջանակներում ձևավորվել են աշխատանքային խմբեր՝ տեխնոլոգիական, կրթական, արվեստի, սպայական, դասական և բժշկական ուղղություններով՝ յուրաքանչյուր ուղղությամբ հայեցակարգերի մշակման նպատակով: Առանձին աշխատանքային խումբ է ձևավորվել նաև մարզային բուհերի մասնակցությամբ: Խոշորացման յուրաքանչյուր ուղղությամբ ներգրավվել է միջազգային հեղինակավոր գործընկեր բուհ, մասնավորապես՝

- ✓ արվեստների ուղղությամբ՝ Լոնդոնի արվեստների համալսարանը,
- ✓ կրթական ուղղությամբ՝ Լոնդոնի համալսարանական քոլեջի կրթական ինստիտուտը,
- ✓ տեխնոլոգիական ուղղությամբ՝ Մյունխենի տեխնիկական համալսարանը:

Կրթական միջավայրի բարելավման համատեքստում ավարտվել է ՆԳՆ ենթակայությամբ մեկ միասնական ուսումնական հաստատության ձևավորմանն ուղղված աշխատանքը, որը կենտրոնանալու է ոստիկանության հենասյունային ծառայությունների, Փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի կադրային պահանջարկը բավարարելուն, շարունակական կրթության տրամաբանությամբ՝ սկսած առաջին անգամ ծառայության անցնելուց, մինչև ծառայողների վերապատրաստում և կարիերայի առաջընթացի ապահովում: Ընդ որում, նշված ծառայություններում աշխատանքի անցնելու համար պարտադիր մուտքային պահանջ է սահմանվելու կրթահամալիրում բազային կրթություն ստանալը: Համապատասխան օրենսդրական փաթեթն ամբողջությամբ ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից, իսկ նոր կրթահամալիրի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության կողմից:

Նպատակ 3. Բարձրագույն կրթության միջազգայնացում

2024-2025 ուսումնական տարում օտարերկրյա դիմորդների թվաքանակը ՀՀ ուսումնական հաստատություններ կազմել է 1 599: ՀՀ բուհերի օտարազգի դիմորդների թվաքանակը կազմել է 738՝ նախորդ տարվա 674-ի փոխարեն: 2024-2025 ուսումնական տարում ՀՀ բուհերում օտարերկրյա ուսանողների թվաքանակը կազմել է 7 684, որից 4 134-ը՝ սփյուռքահայ:

Միջպետական համաձայնագրերի շրջանակում իրականացվել են կրթաթոշակային ծրագրեր բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում ուսանելու համար: Արդյունքում 2024-2025 ուսումնական տարում օտարերկրյա 74 քաղաքացի ընդունվել է ՀՀ բուհեր, իսկ ՀՀ 316 քաղաքացի՝ օտարերկրյա բուհեր: ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28 N 700-Ն որոշման մեջ կատարվել են համապատասխան փոփոխություններ, ձևավորվել է տեղեկատվական միասնական հարթակ:

2024-2025 ուսումնական տարվանից սկսած բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու համար օտարերկրյա դիմորդները, սահմանված կարգի համաձայն, պետք է գրանցվեն օտարերկրյա դիմորդների ընդունելության dev-fs.emis.am համակարգում՝ լրացնելով անձնական տվյալները, ընտրել ուսումնական հաստատությունը և մասնագիտությունը, լրացնել հայտը՝ կցելով պահանջվող փաստաթղթերի PDF տարբերակները:

ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նպատակ 1. Ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչման մեխանիզմների ներդրում, մեծահասակների և երիտասարդների ցկյանս ուսումնառության և մարդկային կապիտալի շարունակական զարգացման միջավայրի ու պայմանների ապահովում

Իրականացվել է միջազգային փաստաթղթերի ՄՈՒԿ առնչվող բանաձևերում, ուղեցույցներում և կարգավորումներում արտացոլված եզրաբանության ուսումնասիրու թյուն: Դիտարկվել են եզրա բանություն ստեղծող և կիրառող հետևյալ դերակատարները՝

- ՅՈՒՆԵՍԿՕ
- Եվրոպական Միություն
- Առանձին պետությունների օրինակներ:

Հետազոտությունը ուսումնասիրել և վերլուծել է ՄՈՒԿ/ԼՇԿ ոլորտի եզրերն ու հասկացությունները, դրանց սահմանումներն ու կիրառության դեպքերը հետևյալ տիրույթներում.

- ՄՈՒԿ/ԼՇԿ գործընթացներն անվանող և սահմանող եզրեր և հասկացություններ,
- Գործընթացում ներառված սուբյեկտներին նկարագրող եզրեր. - կրթություն և ուսումնառություն ստացողներ,
- կրթություն և ուսումնառություն մատուցողներ,

- Համատեքստային եզրեր՝ կրթության բնագավառի ընդհան ական հասկացություններ, որոնք այս կամ այն կերպ կարող են առնչվել ՄՈՒԿ/ԼՇԿ տերմիններին:

Մշակվել է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության արդյունքների գնահատման և ճանաչման գործընթացի կազմակերպման, իրականացման, ճանաչման և հավաստագրման ընթացակարգը:

Միաժամանակ շարունակվում է վիճակագրական տվյալներ հավաքագրելու իրավական հենքերի մշակման աշխատանքները: Գործընթացն ապահովվում է գործընկեր կազմակերպություն-ների հետ համագործակցությամբ: Մասնավորապես, Դի-Վի-Վի Ինտերնեշանալի աջակցությամբ մեկնարկել է Ուսուցման ազգային ռեեստրի տեխնիկական առաջադրանքի կազմման աշխատանք-ները: 2024 թվականի դեկտեմբերին տեղի է ունեցել Ուսուցման ազգային ռեեստրի տեխնիկական առաջադրանքի նախագծի քննարկում, որի արդյունքում հանձնարարվել է վերանայել և լրամշակել նախագիծը:

Ոչ ֆորմալ կրթության (ներառյալ՝ երիտասարդների ու մեծահասակների ուսումնառության և կրթության) իրազեկվածության բարձրացման նպատակով՝

2024 թվականի մարտի 22-ին «Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ» կազմակերպության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ կազմակերպվել է «Մարաքեշ 2022 – Երևան 2023 /2024. Մեծահասակների ուսումնառության և կրթության (ՄՈՒԿ) գլոբալ և լոկալ միտումներ» թեմայով համաժողով, որի հիմնական խնդիրն էր Մեծահասակների ուսուցման և կրթության ոլորտի մասնագետների, ուսանողների և ոչ ֆորմալ կրթության ոլորտում գործող կառույցների շրջանում «Մարաքեշի գործողու թյունների շրջանակի» հանրահռչակումը,

2024 թվականի հուլիսի 10-ին տեղի է ունեցել «ԿրթաԲ.Ա.Ց Ապարան» մեծահասակների ուսումնառության և կրթության կենտրոնի (ՄՈՒԿ) բացման արարողությունը: Կենտրոնը գործելու է «Ապարան համայնքի սոցիալական կենտրոն» ՀՈԱԿ-ի ներքո և ֆինանսավորվելու է «Դի-Վի-Վի ինթերնեյշնալի» հայաստանյան գրասենյակի կողմից՝ Ապարանի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ,

2024 թվականի նոյեմբերի 9-ից ԴՎՎ Ինտերնաշանալի ֆինանանսավորմամբ՝ կրթության համակարգում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության կարագավորումները արդյունավետորեն ներդնելու, ուսուցում իրականացնողների ուսումնամեթոդական հմտությունները կատարելագործելու և զարգացնելու նպատակով Ուսուցման ազգային հիմնադրամը (ՈՒԱՀ) նախաձեռնել է «Կրթության մասին» օրենքի փոփոխությունների վերաբերյալ իրազեկման դասընթացների շարք և ոչ ֆորմալ կրթության համակարգի մեթոդական թիմերի մասնագիտական վերապատրաստում:

ՍՓՅՈՒՌՔ

Նպատակ 1. Նպաստել հայոց լեզվի տարածմանը, հայկական մշակույթի հանրահռչակմանը օտար երկրներում, ներդնել Սփյուռքում կրթության զարգացմանը նպաստող մեխանիզմներ

2024 թվականի ընթացքում իրականացվել է օտարերկրյա համալսարաններում հայագիտական կենտրոնների գործունեության ապահովումը, որը ներառում է 13 երկրների 15 կրթագիտական կառույցներ: Միաժամանակ օտարերկրյա համալսարաններում/ կրթագիտական կառույցներում կազմակերպվել են հետազոտական 6 աշխատանքներ

Կազմակերպվել են հայագիտական միջազգային 3 գիտաժողովներ և կրթամշակութային միջոցառումներ, այդ թվում՝ Մադրիդի Կոմպլուտենս համալսարանում կազմակերպվել է օտարերկրյա համալսարաններում գործող հայագիտական կենտրոնների անդրանիկ համաժողովը, որին մասնակցել են 12 հայագիտական կենտրոնների հայագետներ, ինչպես նաև ՀՀ կրթագիտական կառույցների ներկայացուցիչներ:

Հայաստանում մանկավարժական, մասնագիտական հմտությունների զարգացմանն ուղղված առկա վերապատրաստումներին ուղղված՝ 2024 թվականի պետական բյուջեով հատկացված միջոցներով, հնարավոր է եղել ապահովել 60 ուսուցչի մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին՝ 14 երկրներից: Դասընթացները կազմակերպվել են ուսումնական 7 խմբերում:

Սփյուռքի կրթօջախներում վերապատրաստումների կազմակերպման նպատակով օտարերկրյա համալսարաններում գործող հայագիտական կենտրոններ Հայաստանից գործուղված 2 մասնագետներն իրականացնում են նաև վերապատրաստման դասընթացներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2024 թվականի հոկտեմբերի 28-ի N52-Լ հրամանով հաստատվել են սփյուռքի ուսուցիչների գնահատման բնութագրիչները, որոնք ուղղված են ապահովելու սփյուռքի համար ՀՀ հանրակրթության բովանդակությանը համահունչ կրթական որակյալ և արդյունավետ ծառայություններ, ինչպես նաև սփյուռքում գործող հայկական կրթօջախների՝ հնարավորին չափ ինտեգրումը Հայաստանի կրթական համակարգին:

2024 թվականի օգոստոսի 15-19-ին Աղվերանում անցկացվել է Համահայկական Օլիմպիադան, որին մասնակցել են 65 աշակերտներ և 5 ղեկավարներ՝ 5 երկրներից: Միջոցառումը ֆինանսավորելու նպատակով 2024 թվականին իրականացվել է ՀՀ պետական բյուջեի վերաբաշխում:

Համահայկական մանկապատանեկան գեղագիտական դաստիարակության միջոցառումների կազմակերպման շրջանակներում, աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված, միջոցառմանը հնարավորություն են ունեցել մասնակցելու 5 երկրներ: Միջոցառման իրականացման խորագիրն էր՝ «Շառլ Ազնավուր 100» և «Փարաջանով 100»: Միջոցառման մասնակից երկրների փաստացի թիվը կազմել է 5, իսկ մասնակից կրթօջախների թիվը՝ 334:

Սփյուռքի կրթօջախներին դասագրքերի և այլ տեսակի ուսումնականումեթոդական գրականության տրամադրման նպատակով, ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով հատկացվել է 30.000.0 հազար դրամ, որի շրջանակում հնարավոր է եղել բավարարել 81

հայտ: ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով ծրագրային միջոցառումն իրականացնելու համար նախատեսվում է հատկացնել 90.000.0 հազար դրամ, որով հնարավոր կլինի նաև բավարարել 110 հայտը:

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կայքէջում (https://lib.armedu.am/category/66) տեղադրվել են սփյուռքի կրթօջախների համար էլեկտրոնային նյութեր՝ pdf ձևաչափով:

Սփյուռքի կրթօջախների համար տարբերակված ու հասցեական դասագրքերի և այլ տեսակի ուսումնական ու մեթոդական նյութերի մշակման և դրանց տարածման ուղղությամբ՝ 2024 թվականին մշակվել է ուսումնամեթոդական 1 նյութ, որը նախատեսված է իսպանախոսների համար՝ (իսպաներենի հենքի վրա հայերենի ուսուցում): Ուսումնամեթոդական նյութի ամբողջական կիրառումը նախատեսվում է 2025 թվականից, այդ թվում՝ Քենեդի համալսարանում (Արգենտինա):

ՄԻՆՉԵՎ 2030 ԹՎԱԿԱՆԸ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

Բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայություններ



500 մանկապարտեզների ծրագիր



Շահառու 3-5 տարեկան ~ 33 200 երեխա.
Կրթահամալիրներում ~ 3700 երեխա.

Նախակրթարան հաճախող - 6 290 երեխա.

Հագեցում ամբողջական գույքով.

3-5 տարեկանների առնվազն 95%-ն ընդգրկված կլինի նախադպրոցական ծառայություններում





Բոլոր դպրոցները համալրված կլինեն որակավորված և սահմանված ստանդարտներին համապատասխան ատեստավորված մանկավարժներով, որոնք կստանան արժանապատիվ վարձատրություն





Ուսուցչի մասնագիտության գրավչության բարձրացում.

- Դպրոց նոր մուտք գործած ուսուցիչների թիվը՝ 3 300, 56%-ը՝ գյուղական դպրոցներում,
- 2023թ. բարձրագույն կրթություն չունեցող և աշխատող ուսուցիչների թիվը՝ 1089, 2024թ. ատեստավորված բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչների թիվը՝ 551 (51%) Պետ. աջակցությամբ բարձրագույն կրթություն ստացող ուսուցիչների թիվը՝ 49 (10.66 մլն դրամ)
- 30 կրեդիտ ստացած ուսուցիչների ընդհանուր թիվը՝ 295.

Խրախուսման ծրագրերի շրջանակում գրանցված առաջընթաց.

- 2024թ. ատեստավորմանն առաջին անգամ մասնակցողների թիվը ընդհանուր հայտագրվողների նկատմամբ՝ 56.7% (ամենաբարձրը).
- 2024թ. տարակարգ ստացած ուսուցիչների թիվը՝ 285 (2.8 անգամ ավելի 2023թ. նկատմամբ):

Ոչ մի երեխա դուրս չի մնա պարտադիր կրթության համակարգից



Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների հաշվառման Էլեկտրոնային համակարգի գործարկումը սկսվել է 2024 թվականի մայիսի 1-ից, և համակարգի գործարկումից մինչ օրս՝ պարտադիր կրթության համակարգ է վերադարձել 6441 երեխա (պարտադիր կրթությունից դուրս մնացած համարվող երեխաների շուրջ՝ 35 %-ը):

Ուսումնառության արդյունքներ/ուսումնառության տևողություն հարաբերակցությունը 8,3-12 տարի հարաբերակցությունից կհասցվի 11,5-12 տարի հարաբերակցության

Հանրակրթության նոր չափորոշչի՝ Տավուշի մարզում երկու տարվա փորձարկման արդյունքում գրանցվել է ուսումնառության արդյունքի ավելացում 6 ամսով:

Բնագիտության և մաթեմատիկայի միջազգային գնահատման արդյունքներով Հայաստանի դպրոցականները կցուցաբերեն շարունակական աճ՝ գրանցելով միջինից (500 միավորից) բարձր ցուցանիշներ, համապատասխանաբար՝ 575, 550

Աշակերտների գնահատման TIMSS-2023 միջազգային ստուգատեսի արդյուքներով՝

- Մաթեմատիկայից՝ միջինից բարձր՝ 513 միավոր, 93%-ը հաղթահարել է նվազագույն շեմը.
- Բնագիտությունից՝ 82%-ը հաղթահարել է նվազագույն շեմը. 40%-ը՝ միջին շեմը:



Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգը ձեռք կբերի միջազգային հեղինակություն, որի շնորհիվ օտարերկրյա ուսանողների թիվն առնվազն կկրկնապատկվի

2024-2025 ուսումնական տարում ՀՀ բուհերում օտարերկրյա ուսանողների թվաքանակը կազմել է 7 684, որից 4 134-ը՝ սփյուռքահայ: